Աստվածային կոմեդիա

Վահան Թոթովենց

Մեր վաճառատան կառավարիչը հեռախոսի լսափողը կախելուց հետո մոտեցավ ինձ և ասաց.

— Շուտ գնա մր. Ֆինկլշտայնի տունը և տես, թե ինչ արևելյան գորգեր կան, որոնք կարիք ունեն նորոգվելու և մաքրվելու:

— Շատ լավ, — ասացի և դուրս եկա անմիջապես դեպի մր. Ֆինկլշտայնի ապարանքը:

Մր. Ֆինկլշտայնը Ամերիկայի Միացյալ Նահանգների միլիարդատերերից մեկն էր: Ամերիկայի շատ հարուստների տներում եղել էի շնորհիվ արևելյան գորգերի մասնագետ լինելուս, բայց մինչև այդ չէի եղել Ֆինկլշտայնի բնակարանում:

Մր. Ֆինկլշտայնի բնակարանը գտնվում էր արիստոկրատների թաղում, բլուրի ամենաբարձր կետի վրա, շրջապատված զանազան տեսակի ծառերով, որոնց յուրաքանչյուր ճյուղին դիպել էր մարդկային մկրատը և արվեստական ձև տվել:

Դեռևս ծառուղին չմտած՝ իմ դեմ տնկվեցին երկու նեգր,որոնք պաշտպանում էին մր. Ֆինկլշտայնի բնակարանի մուտքը: Անմիջապես ներկայացրի մեր վաճառատան այցետոմսը և նրանք բաց արին դուռը:

Դռանը դիմավորեց երիտասարդ և գեղեցիկ մի սպասուհի, որի սպիտակ գլխանոցը միայն մատնում էր նրա սոցիալական դրությունը: Բարևեցի սպասուհուն և երկարեցի մեր վաճառատան այցետոմսը: Սպասուհին իսկույն ինձ հրավիրեց դեպի դահլիճ, խնդրեց նստել, իսկ ինքը հեռացավ այցետոմսը ձեռին:

Դահլիճում ամեն ինչ թանկագին էր, բայց չափազանց պարզ: Մր. Ֆինկլշտայնի մարմարե բյուստը դրված էր դահլիճի վերևի ճակատին, բարձր պատվանդանի վրա: Մր. Ֆինկլշտայնի դեմքը ոչ մի խորշոմ չուներ:

— Երևի երիտասարդության բյուստն է, — մտածեցի,- կամ ինքը ցանկացել է, որ վարձու արվեստագետը երիտասարդ քանդակե իրեն:
Պատի օջախում դարսված էին համաչափ փայտեր, որոնց ետևում վառվում էր էլեկտրական կարմիր մի լամպ՝ սոսկ վառվելու իլյուզիան տալու համար: Աջակողմյան լուսամուտներից, ծառերի արանքում, երևում էր փոթորկալի մի ծով, իսկ ծովի անմիջապես ետևը ցցվում էր հարևանի տան կտուրը:
— Այս քաղաքում ծով չկա, — մտածեցի, — սա ի՞նչ ծով է, որ երևում է: Երբ շարունակեցի նայել, գլխի ընկա, որ փոթորկալի ալիքները չէին շարժվում — սոսկ դեկորացիա էր, նատուրալիստական մի նկար:
Դահլիճի խորքի մուգ-կարմիր թավշյա վարագույրները բացվեցին, ներս մտավ մի պառավ կին, չափազանց պարզ հագնված և մոմի պես դժգույն դեմքով: Ծովային պատրանքը ինձ մի վայրկյան մտածել տվեց, որ ներս մտնողն էլ դեկորացիա է — այնպես նկարային դեմք ուներ, բայց ոչ, սկսեց խոսել:
— Դուք եկել եք արևելյան գորգե՞րը տեսնելու:
— Այո, մադամ, — պատասխանեցի և ոտքի կանգնեցի:
— Գնանք ցույց տամ:
Ես հետևեցի նրան:
Նա ինձ առաջնորդեց մատենադարանը և խնդրեց, որ մատենադարանի արևելյան գորգերը նորոգեմ, լվամ և արդուկեմ:
— Շատ լավ, — պատասխանեցի մեքենայաբար, որովհետև այդ րոպեին իմ աչքերը հափշտակված էին մատենադարանի գրքերով:
Համաշխարհային ամբողջ գրականությունն այստեղ կար, բոլորը ոսկեզօծ, յուրաքանչյուր դարաշրջանի և ազգության գրականությունը դարսված միաչափ հատորներով և միագույն շապիկներով: Օրինակ՝ հելլենական գրականությունը ամբողջական դարսված էր դահլիճի արևմտյան պատի վերևում, ոչ մի անուն պակաս չէր՝ հունական երկնքի նման կապույտ շապիկով:
Կյանքումս առաջին անգամն էր, որ խորապես նախանձեցի հարուստին: Գրքեր, գրքեր՝ ահա իմ կյանքի երազը:

— Պետք է խնդրել մադամից, որ թույլ տա աչքի անցկացնելու բոլոր գրքերը, — մտածում էի, երբ տեսա, որ պառավը գնում էր դուրս:

Պառավի ետևից ես էլ դուրս եկա և գնացի վաճառատուն կառք բերելու և տանելու գորգերը նորոգելու և լվանալու համար:

Վերադարձիս արդեն որոշել էի խնդրել, որ ինձ թույլ տան գեթ տեսնելու Դանտեի «Աստվածային կոմեդիայի» մեծ հատորը, որի վրա շլացուցիչ տառերով գրված էր «Արքայական հրատարակություն»:

Վաղուց լսել էի, որ «Աստվածային կոմեդիայի» մի այդպիսի շքեղ հրատարակություն գոյություն ունի, որի նկարազարդումը գերազանցում է ցանկացած գրքի նկարազարդումը:

— Անպայման այդ հրատարակությունը կլինի, – մտածում էի:

Երբ վերադարձա մր. Ֆինկլշտայնի ապարանքը, էլի ինձ դիմավորեց նույն գեղեցիկ սպասուհին:

— Ի՜նչ լուռ բնակարան է, — ասացի սպասուհուն՝ միջանցքներով անցնելիս, որպեսզի մի խոսք բանամ և հետզհետե հասնեմ գրքերի հարցին:

— Լուռ է, այո, և շատ էլ տխուր, — պատասխանեց սպասուհին:

— Տխո՞ւր, ընդհակառակն, լավ է այստեղ, լուռ, խոր:

— Այս հսկա տան մեջ միայն այդ պառավն է և մին էլ մր. Ֆինկլշտայնը՝ նրա ամուսինը, ուրիշ ոչ ոք չկա, շատ գործ էլ չկա, որ չտխրեմ: Ես դիմավորում եմ միայն այցելողներին և ճանապարհ զցում նրանց, ճաշն էլ դրսից է գալիս, ոչինչ չկա անելու, այնքան տխրում եմ, որ երբեմն մտածում եմ գնալ դուրս, լինել գործազուրկ, բայց լինել մարդկանց մեջ, աղմուկի մեջ:

- Կարդացեք, — ասացի զսպված բարկությամբ, — կարդացեք, կարդացեք, ա՛խ, եթե ես ժամանակ և գիրք ունենամ կարդալու...

- Կարդում եմ, — պատասխանեց սպասուհին, շատ եմ կարդում, «Կապույտ գրքի» վերջին համարն ամբողջ վերջացրել եմ, ուզու՞մ եք ձեզ տամ, կարդացեք:

- «Կապույտ գիրքը» չեմ ուզում, — ասացի և մատենադարան չմտած՝ բռնեցի նրա ձեռքը: Չդիմադրեք:

- Մի՛ վախենաք, — փսփսաց նա:

- Մի բան եմ խնդրում քեզանից:

- Պատրաստ եմ, — պատասխանեց սպասուհին: Նրա դեմքի վրա հրճվանքի մի մեծ ալիք բացվեց:
— Սպասի՛ր, գորգերը հավաքեմ, կասեմ:
Գորգերը հավաքեցի, հանձնեցի նեգրին, որ դարսի կառքի մեջ, և մոտենալով սպասուհուն՝
-Երիտասարդ լեյդի — ասացի, — թույլ տուր առնեմ Գանտեի «Աստվածային կոմեդիա»-ի մեծ հատորը:
Սպասուհին ապշած նայեց իմ աչքերին և սկսեց բարձր ծիծաղել ու հռհռալ.
— Խնդրեմ, խնդրեմ:
Առանց ուշք դարձնելու կանացի հռհռոցին արագորեն վերցրի «արքայական հատորը»: Թեթև էր, փորձեցի բանալ, բայց չկարողացա, դես-դեն շուռ տվի, անօգուտ: Սպասուհին շարունակում էր դաժանորեն ծիծաղել:
Զայրացած՝ գետին շպրտեցի Դանտեն:
- Այս բոլոր գրքերը կարտոնից են շինված, — հարեց սպասուհին, — ավելի լավ է, որ վերցնես «Կապույտ գիրքը» և կարդաս:
- Ծնորհակալ եմ, – պատասխանեցի և սկսեցի քայլել դեպի դուրս:
Միջանցքից լսում էի, որ սպասուհին ծիծաղում էր անգութ կերպով:

1929 թ.